ԹԵՄԱ 2 ԱՆՏԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

§ 19. ԴԱՍԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀՈՒՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

1 Սկզբնական շրջանում յուրաքանչյուր տոհմ կամ ցեղ ուներ իր աստվածները: Երբ կազմավորվեց հույն ժողովուրդը, բազմաթիվ աստվածներից համանունական նշանակություն ստացան 12-ը:

Աստվածների ընտանիքը՝ հին հույների պատկերացմամբ	
Զևս	*կայծակի և ամպրոպի աստվածը, աստվածների հայրը*
Հերա	*ընտանիքի և մայրության հովանավորը, Զևսի կինը*
Պոսեյդոն	*ծովերի և օվկիանոսի աստվածը, Զևսի եղբայրը*
Դեմետրա	*բնության զարթոնքի և պտղաբերության աստվածուհին, Զևսի քույրը*
Ապոլոն	*արևի աստվածը, գիտության և արվեստների հովանավորը, Զևսի որդին*
Արտեմիս	*լուսնի աստվածուհին, անտառների և որսորդության հովանավորը, Ապոլոնի քույրը*
Արես	*պատերազմի, մահվան աստվածը, Զևսի և Հերայի որդին*
Աֆրոդիտե	*սիրո և գեղեցկության աստվածուհին, Զևսի և Հերայի դուստրը*
Հեփեստոս	*դարբնության աստվածը, արհեստների հովանավորը, Զևսի և Հերայի որդին*
Աթենաս	*իմաստության աստվածուհին, քաջերի և հերոսների հովանավորը, Զևսի դուստրը*
Դիոնիսոս	*գինեգործության և տոնախմբության աստվածը, թատրոնի հովանավորը, Զևսի որդին*
Հերմես	*անասնապահության, առևտրի և ծովագնացության աստվածը, Զևսի որդին*
Հադես	*ստորերկրյա թագավորության (Տարտարոսի) աստվածը, Զևսի եղբայրը*
Պերսեփոնե	*Հադեսի կինը, մեռնող և հարություն առնող բնության աստվածուհին, Դեմետրայի դուստրը*

Մարդիկ կարծում էին, որ աստվածները մարդկանց պես ապրում են նահապետական ընտանիքով և բոլորը ենթարկվում են ընտանիքի ավագին: Հույներն առավել կարևորում էին այն աստվածներին, որոնք հովանավորում էին մարդկանց հիմնական զբաղմունքները: Մարդիկ սովորաբար դիմում էին իրենց մասնագիտությունը հովանավորող աստծուն. երաժիշտներն ու բանաստեղծները՝ Ապոլոնին, դարբինները՝ Հեփեստոսին, հողագործները՝ Դեմետրային կամ Դիոնիսոսին, առևտրականները՝ Հերմեսին:

Հույները համոզված էին, որ աստվածներն են որոշում մարդկանց ճակատագիրը, օգնում կամ խանգարում նրանց: Իրենց աստվածների պատվին նրանք շքեղ տաճարներ էին կառուցում, գեղեցիկ արձաններ կերտում և կենդանիներ զոհաբերում: Նրանց մասին գեղեցիկ առասպելներ էին հորինում:

Առասպելներից մեկն այն մասին է, թե ինչպես ***Պրոմեթևսն*** Օլիմպոսից գողացավ կրակը և տվեց մարդկանց: Նա մարդկանց սովորեցրեց մետաղներ մշակել, վար ու ցանք անել, արհեստներով զբաղվել, գրել, կարդալ և հաշվել: Նա, հեշտացնելով մարդկանց կյանքը, նրանց ուրախություն պարգևեց: Զայրացած Զևսը նրան գամեց Կովկասի լեռներին և դատապարտեց հավերժական տանջանքների:

Արգոնավորդների մասին առասպելում նկարագրվում է, թե ինչպես հերոս Յասոնն ուղևորվեց հեռավոր Կոլխիդա՝ Ոսկե գեղմը բերելու: Նրա հետ մեկնեցին ուրիշ շատ հերոսներ Հունաստանի տարբեր քաղաքներից: Նրանք ուղևորվեցին «Արգո» նավով, դրա համար էլ կոչվեցին արգոնավորդներ: Բազմաթիվ արկածներից հետո հասնելով Կոլխիդա՝ Յասոնը կարողացավ սպանել Ոսկե գեղմը պահպանող վիշապին և, դրան տիրանալով, վերադառնալ Հունաստան:

Հունական առասպելների սիրված հերոսը Զևսի որդի ***Հերակլեսն*** էր: Հերա աստվածուհին ամեն ինչ

անում է նրան կործանելու համար: Նրա ուղարկած 2 օձերը պետք է խեղդեին օրորոցում քնած Հերակլեսին: Բայց մանուկ հերոսն ինքը խեղդեց օձերին: Մեծանալով՝ Հերակլեսը դարձավ արտակարգ ուժի տեր տղամարդ: Շրջագայելով ողջ Հելլադայով՝ նա 12 սխրանք կատարեց, ***սպանեց հսկա առյուծին***, վարազին, ցուլին, հիդրային, ազատեց Պրոմեթևսին, հաղթեց ամազոնուհիներին և այլն:

Հերակլեսի հայտնի քաջագործություններից էր Ավգյան ախոռների մաքրումը: Օլիմպիա քաղաքի Ավգոս արքան եզների մեծ նախիր ուներ: Դրանց ախոռները երբեք չէին մաքրվել: Նրան, ով մեկ օրում կկարողանար մաքրել ախոռները, Ավգոսը խոստացել էր տալ իր նախրի կեսը: Հերակլեսը, մոտակա երկու գետերի ջրերը շրջելով դեպի ախոռները, մեկ օրում մաքրեց այն: Բայց Ավգոսն իր խոստումը չկատարեց: Զայրացած Հերակլեսը օգնության կանչեց Հունաստանի հայտնի հերոսներին, նրանց օգնությամբ հաղթեց և սպանեց Ավգոսին: Դրանից հետո նա Օլիմպիա քաղաքում հատուկ սպորտային խաղեր սահմանեց, որոնք տեղի էին ունենում 4 տարին մեկ անգամ: Դրանք նշանավոր Օլիմպիական խաղերն էին:

ԻԼԻԱԿԱՆ

Տրոյա պետությունը գտնվում էր Փոքր Ասիա թերակղզու ծովափին: Հույներն այդ քաղաքը կոչում էին Իլիոն, այստեղից էլ ծագել է պոեմի անունը: «Իլիականը» հույների և տրոյացիների տասնամյա պատերազմի մասին է: Տրոյայի արքայորդի Պարիսն առևանգել էր գեղեցկուհի Հեղինեին՝ Սպարտայի արքա Մենելայոսի կնոջը: Աքայական պետությունները միավորվեցին տրոյացիներից վրեժ լուծելու համար: Տրոյական արշավանքին մասնակցեցին բասիլևսներ Ոդիսևսը, Նեստորը, հունական նշանավոր հերոս Աքիլլեսը և ուրիշներ:

Աքիլլեսն իր մարտակառքով քարշ է տալիս Հեկտորի դին:



Հույները տասը տարի պատերազմեցին, սակայն բարձր պարիսպներ ունեցող Տրոյան գրավել չէին կարողանում: Տրոյացիները Հեկտորի գլխավորությամբ հաջողությամբ պաշտպանում էին իրենց քաղաքը: Ի վերջո Ոդիսևսը մի խորամանկ հնար գտավ: Հույները պատրաստեցին մի շատ մեծ փայտե ձի, որի մեջ թաքնվեցին հույն զինվորները: Իբրև թե պատերազմից հոգնած հունական զորքը նստեց նավերը և հեռացավ:

Տրոյացիները փայտե ձին ներս տարան քաղաք, կարծելով, որ դա աստվածների պատվին պատրաստված նվեր է: Գիշերը հույները, ձիուց դուրս գալով, բացեցին Տրոյայի դարպասները և վերադարձած հունական բանակը ներխուժեց քաղաք: Տրոյան թալանվեց և ավերվեց:

ՈԴԻՍԱԿԱՆ

Տրոյական պատերազմի ավարտից հետո Ոդիսևսի տունդարձի ժամանակ, փոթորկից կործանվում են նրա 11 նավերը: Ոդիսևսը, միակ փրկված նավով և ողջ մնացած ուղեկիցներով, երկար թափառում է ծովերում և բազմաթիվ արկածների հանդիպում:

Ոդիսևսը Սիրենների կղզում

Հայրենի Իթակե կղզում Ոդիսևսին վաղուց մեռած էին համարում: Տրոյական պատերազմի ավարտից արդեն անցել էր տասը տարի: Բազմաթիվ փեսացուներ համոզում էին Ոդիսևսի կնոջը՝ Պենելոպեին, ամուսնանալ իրենցից մեկի հետ, որն էլ կդառնար կղզու թագավորը: Բայց Պենելոպեն հավատում էր, որ Ոդիսևսը ողջ է, և չէր ուզում նորից ամուսնանալ: Քսան տարվա բացակայությունից հետո տուն վերադառնալով՝ Ոդիսևսը սպանում է բոլոր փեսացուներին և կրկին թագավորում Իթակեում:

2

Հին Հունաստանի ամենահեղինակավոր գուշակավայրը գտնվում է Դելֆիքի Ապոլոնի տաճարում: Հատուկ պատգամախոս քրմուհին՝ ***պյութիան***, հարցում ստանալով անցնում էր տաճարի խորքում գտնվող հատուկ սրահը, ուր գետնի ճեղքից դուրս էին գալիս թունավոր գոլորշիներ: Դրանց ազդեցությամբ պյութիան հայտնվում էր կիսագիտակից վիճակում և արտաբերում էր ինչ-որ խոսքեր, որոնք համարվում էին Ապոլոն աստծո պատասխանը տրված հարցին: Քրմերը գրի էին առնում պյութիայի խոսքերը և հանձնում հարցատուին: Իհարկե, նման հարցումների համար պետք էր բարձր վճար մուծել տաճարին: Պատասխանը սովորաբար լինում էր մշուշապատ և երկիմաստ: Հիշեք, օրինակ, Լիդիայի արքա Կրեսոսի հարցումը, թե ինչ կպատահի, եթե ինքը պատերազմ սկսի Պարսկաստանի դեմ, և պյութիայի տված գուշակությունը:

Դելֆիք, Ապոլոնի տաճարը և գուշակավայրը

3

Էպիդավրոսի թատրոնը



Դորիական ոճ Կորնթական ոճ Հոնիական ոճ



Հունական տաճարի արտաքին տեսքը

Զևսի արձանը Օլիմպիայում

Ֆիդիաս

Աթենասի արձանը Ակրոպոլիսում

Լրացուցիչ նյութ

Հիշե՞նք, թե՞ մոռանանք Հերոստրատին

Ք.ծ.ա. VI դարի կեսին, Փոքր Ասիայի հունական Հեփեսոս քաղաքի բնակիչները քաղաքում սպիտակ մարմարից շքեղազարդ տաճար կառուցեցին նվիրված վայրի կենդանիների և բնության պահապան Արտեմիս աստվածուհուն: Տաճարի շինարարության համար մեծ գումար հատկացրեց և հարևան Լիդիա պետության արքան Կրեսոսը:

Հոյակերտ տաճարն ուներ 100 մ երկարություն, 50 մ լայնություն և 18 մ բարձրություն: Երկթեք տանիքը հենվում էր 127 մարմարե սյուների վրա: Ներսում դրված էր հավերժ երիտասարդ Արտեմիս աստվածուհու փղոսկրից պատրաստված գեղեցիկ արձանը, որի ոտնամաններնը անգամ մաքուր ոսկուց էին:

Հույները և հարևան ժողովուրդները այդ սքանչելի կառույցը համարում էին հին աշխարհի հրաշալիքներից մեկը: Շատերը հավատում էին, որ աստվածուհին անձամբ պաշտպանում և հովանավորում է իր պատվին կառուցված տաճարը: Անգամ Ք.ծ.ա. IV դարում Հեփեսոսը գրաված պարսիկները չհամարձակվեցին վնաս պատճառել տաճարին:

Բայց ահա Ք.ծ.ա. 356 թ. հուլիսի 21-ի գիշերը, Հերոստրատ անունով ոմն երիտասարդ, հրկիզեց Արտեմիսի հրաշագեղ տաճարը: Չարագործը չէր էլ փորձում թաքնվել, նրան անմիջապես ձերբակալեցին: Մահապատժից առաջ, հարցաքննության ժամանակ նա չզղջաց իր կատարածի համար և հայտարարեց, որ տաճարը հրկիզել է, որպեսզի անմահացնի իր անունը: Ցավոք դա նրան հաջողվեց:

Զազրելի չարագործությունից ցնցված, մարդիկ պայմանավորվեցին երբևէ չհիշատակել այդ փառամոլ հանցագործի անունը: Սակայն, շատ տարիներ անց, հռետոր Թեոպոմպեսը իր ճառերից մեկում, որպես փառասիրության օրինակ, հիշատակեց Հերոստրատի անունը: